

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/3

7 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գառնիկ Ջախարյանի 15.05.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 13.04.2015 թ-ի թիվ 575 որոշման դեմ:

Ա/Ձ Գառնիկ Ջախարյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Գառնիկ Ջախարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ 09.10.2001թ. որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է Նոյեմբերյանի ՏՀՏ-ում, որի իրավահաջորդը ներկայումս հանդիսանում է Իջևանի ՏՀՏ-ն:

Պետական գրանցման վկայականի գործունեության ժամկետը ավարտվել է 21.01.2004թ.-ին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետից հետո իր նկատմամբ հարկեր և այլ պարտադիր վճարներ չպետք է հաշվարկվեին:

13.04.2015թ. Իջևանի ՏՀՏ պետի կողմից կայացվել է հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու վերաբերյալ թիվ 575 որոշումը, համաձայն որի Ա/Ձ Գառնիկ Ջախարյանից գանձման ենթակա է 100.598 դրամ: Պարտքը վերաբերվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարներին:

Գանգատաբերը գտնում է, որ այդ մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներին համապատասխան, վերը նշված վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ այն կայացվել է օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանության հետևանքով, հետեյալ պատճառաբանությամբ.

Հավանաբար նկատի ունենալով, որ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը չի հանձնվել հարկային մարմին 2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել է պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարներ և ժամկետանց օրերի տույժեր:

Ձևական առումով մնալով անհատ ձեռնարկատեր 2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար այլևս չպետք է հաշվարկվեին պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարներ:

«Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Պետական գրանցման վկայականը ժամանակավոր լիազոր մարմին հանձնած և այդ ժամանակաշրջանում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը /ձեռներեցր/ սույն մասով սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չեն կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար»:

Վկայականը հանձնելու և գործունեություն չիրականացնելու պայմանով նվազագույն սոցիալական վճարներից ազատելու դրույթը «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետում մտցվել է 2006թ.

սկսած, որի մասին գանգատաբերը չի տեղեկացվել: Հետևապես, իր վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն:

Ելնելով վերոգրյալներից և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 8-րդ, 63-րդ, 70-րդ, 72-րդ հոդվածների պահանջներով գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել «Հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին» Իջևանի ՏՀՏ պետի 13.04.2014թ. թիվ 575 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Գառնիկ Զախարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 15.12.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 100.588 դրամ, որն առաջացել է 2011թ-ի դեկտեմբերից մինչև 2012թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարները չվճարելու համար: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 13.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 575 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գառնիկ Զախարյանից 100.588 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեգիստրի կողմից 09.10.2001 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա068675 վկայականի համաձայն քաղաքացի Գառնիկ Զախարյանը գրանցված է ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց 09.10.2001 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա068675 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 09.10.2001 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Գառնիկ Զախարյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.01.2004 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա068675 վկայականում, ինչպես նաև վկայականի ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Գառնիկ Զախարյանը 01.01.2004 թ-ից դադարել է անհատ

ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Գառնիկ Զախարյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ գործում առկա չէ որևէ ապացույց Ա/Ձ Գառնիկ Զախարյանի գործունեության ժամկետը լրանալուց հետո, այն է՝ 01.01.2004 թ-ից հետո, ընկած ժամանակահատվածում նրա կողմից գործունեություն իրականացնելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ Գառնիկ Զախարյանի նկատմամբ 2011թ-ի դեկտեմբերից մինչև 2012թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 13.04.2015 թ-ի թիվ 575 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ